

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐՈՑ

ՀՍՏ ՀԱՅԿԵԱՆ ՇՐՋԱՆԻ

(Տես յէջ 184)



Գ. Անցնինք ի քննութիւն երբայականի և հայ Եօթանանից մէջ եղած զանազանութեանց. ինչպէս Բ. յօդուածին մէջ տեսանք, Յոյն Եօթանառունք Ղամբայ ծնունդն Մաթուսաղայի 167 երօդը տարւոյն դրած են, իսկ մերն և

Երբայական 187ին. Բայց Հայկականն պատու իսկ Երբայականին հետ չնոյնանար ամբողջին մէջ. տակաւին մեծ խտրոց կայ, ինչպէս ստորեւ դրուած ցուցակն ցոյց կու տայ.

Համեմատութիւն												
	Աղաժ ծնանի զԱլթ	Սէթ ծն. զԵնովս	Ենովս ծն. զԿայնան	Կայնան ծն. զՄաղաղիէլ	Մաղաղիէլ ծն. զՅարէդ	Յարէդ ծն. զԵնովս	Ենովս ծն. զՄաթուսաղայ	Մաթուսաղայ ծն. զՂամբ	Ղամբ ծն. զՆոյ	Ջրհեղեղ Նոյի 600րդի	Բովանդակութիւն	
Ըստ Երբայականի	130	105	90	70	65	162	65	187	182	600	1656	
» Սամարացոց	130	105	90	70	65	62	65	67	53	600	1307	
» Յոյն Եօթանանից	230	205	190	170	165	162	165	167	188	600	2242	
» Մեր Ս. Գրոց	230	205	190	170	165	162	165	187	188	600	2262	

վանդի միւս նախահարց իւրաքանչիւր տարեգումարն մինչև ի ծնունդ յիշատակեալ անձին՝ հարիւր տարի աւելի է ըստ Եօթանանից. սակայն Յարեդի տարեգումարի մէջ երեքն կը միարանին. միայն Սամարացին կը զարտուղի, որ Երբայականին նման է, բաց ի Յարեդի՝ Մաթուսաղայի և Ղամբայ տարիներէն. իսկ Երբայականին և Եօ-

թանանից մէջ եղած տարբերութիւնն գրեթէ ընդհանուր է, բաց ի Յարեդի տարեգումարէն յորում կը միարանին. Մաթուսաղային, ինչպէս Բ. յօդուածին մէջ տեսանք, 20 տարւոյ միայն տարբերութիւն ունի, Ղամբայն կը զանազանի վեց տարւոյ տարբերութեամբ, Մերն Մաթուսաղայի տարեգումարին մէջ Երբայականին հետ

նոյն է, իսկ մնացելոց մէջ ընդ Եօթա-
նասնից :

Քայց այդ տարիներու տարբերու-
թիւնը մեր թարգմանութեան մէջ ոչ
ըստ քմաց եղած է, այլ խորհրդով և
հիմամբ, ըստ խօսից Ս. Ալգոտարինոսի.
« Քանզի և յերիս ոմանա յոյն օրինակս
և ի մի լատին և յապ մի ասորին հա-
մաձայնութեամբ իրերաց գտաւ » . ու-
րեմիս այսպէս հայառ յոյն օրինակներ
սակասութիւն են եղեր, և մեր թարգ-
մանաց իմաստով թիւնն յայնմ կը տես-
նուի՝ որ այնչափ տարբերութեանց մի-
ջէն ճամբարիսն որոշել կըցեր են :

Արդ ըստ Եբրայականին՝ Ադա-
մէն մինչև ջրհեղեղ 1656 տարի է, ըստ
յոյն Եօթանասնից (քաց ի երեք օրի-
նակներէ) նոյնչափ ժամանակն կը հա-
շուի 2242 տարի, և ըստ մեր թարգ-
մանութեան 2262 տարի :

Տեսնելով թուականաց զանազանու-
թիւն այլ և այլ թարգմանութեանց և
անոնց օրինակաց մէջ, հարկ չէ ըսել՝
թէ մին կամ միւսն սխալ է, երբ կա-
րելի է պատշաճ եղանակաւ բերել միա-
բանել բոլորն այլ, կնճռոյն երկու ծայ-
րերը միմեաց կցելով. ինչպէս հետեւեալ
յօդուածին մէջ պիտի տեսնենք :

Գ. Յայտնի է ի Ս. Գրոց՝ թէ որդւոց
որդի յանուանէ յիշատակուած ամէն
անձինք չեն անդրանիկք. կան անոնց
մէջ ոմանք՝ և թերեւ շատերն՝ որ կըրտ-
սեր են, Ոմանց կրտսերութիւնը յայտ-
նապէս կը յիշէ սուրբ Գիւրք. ոմանցը
պատճառաբանութեամբ կըրնանք իմա-
նալ. և կան ոմանք՝ որ բնաւ անյայտ են
և որոշ չենք կըրնար ճանատարել իրենց
անդրանիկ կամ կրտսեր ըլլալն, Յայ-
տնի կրտսերք են Արփաքսադ (Դճ. Ժ.
Ա. ՄՆ. 24) . Յակոբ՝ որ ռապնաթա-
նով անդրանկութիւնը գնեց, և իւր
թուռներէն փոխանակ Մանասէի՝ Եփ-
րեմայ տուաւ անդրանկութիւնը. Դա-
ւիթ Յեսսեայ ութերորդ որդին էր,
այսպէս և Սողոմոն, Ռեդզիա՝ (Ք. ՄՆ. ԻԱ
17), Յովսա որդի Ռեդզիայ՝ օրոյ երէց

եղբարքը կոտորեց Գոթողիա, Այս-
պէս կարգաւ եթէ թուենք՝ շատերը
կրտսեր կը գտնենք, Ոմանց համար
ըսի թէ պատճառաբանութեամբ կը
գտնենք, ինչպէս Սեմ և Աբրահամ, ու
րոց անդրանիկ չըլլայն Ե. յօդուածին
մէջ պիտի ցուցնենք, Արդ երբ տես-
նենք՝ որ ի սուրբ Գրոց յիշեալ ամէն
նահապետք չեն անդրանիկ, պէտք է
որոշել երկու թուական. մին՝ անդրան-
կին համարել, և միւսն՝ այն անձին ու-
րոյ վրայ կը խօսուի :

Ուրեմն զատենք. Ս. Գրոց օրինակ-
ներէն մին՝ յետածնին ծնունդը յիշե-
լու ժամանակ՝ հօր այն տարիքը կ'ըն-
ծայէ՝ յորում կը գտուէր նա անդրան-
կին ծննդեան ժամանակ. ուզելով այ-
սու հօր զաւակասերութեան սկզբնա-
կան տարին անկորուստ և անվրէպ
պահել, իսկ միւսն՝ այն տարիքն կ'ըն-
ծայէ հօր, յորում կը գտուէր նա յի-
շատակեալ յետածնին ծննդեան ժա-
մանակ, իսկ ուր կը միաբանին սուրբ
Գիւրք և թարգմանութիւնք և մի և նոյն
թուականը կը գնեն, հարկ է ըսել՝ թէ
յիշատակեալ անձն անդրանիկ է. և
պէտք է այս խորհրդածութեամբ մեկ-
նութիւն տալ թուականաց տարբերու-
թեան :

Միայն Սեթայ ծննդեան թուակա-
նին վրայ խորհրդածելու արժանի կէտ
մի կայ այս է, Ադամայ երկու հարիւր
երեսուն տարւոյն ըստ Եօթանասնից՝
թէ 130 ին է ըստ Եբրայականին, Յի-
շեալ խորհրդածութեան համեմատ,
կրտսերոյն՝ Սեթայ ծնունդը կըրնանք
230 ին գնել, իսկ Կայենինն 130 ին
պէտք է գնել. միթէ կարելի՞ է զկայէն,
սր անդրանիկն էր Ադամայ, այդ տար-
ւոյն գնել. արդեօք 130 տարի Ադամ և
Եւա աշխարհիս վրայ անորդի՞ բնա-
կեցան. անշուշտ ոչ, թէպէտ հաւանա-
կան չէ թէ 130 Կայենի ծննդեան թուա-
կանն ըլլայ, սակայն և ոչ Սեթայ ծնն-
դեանն է, այլ ըստ իս Աբելի մահուան.
այդու իմացնել ուզելով Ս. Գիւրք առա-

ջին զոհին տարին, և կամ չուղեով ծածկել այնպիսի մեծ ոճիւր մը որ առաջին անգամ աշխարհիս վրայ գործեցաւ:

230 թուականին Սեթայ ծննդեան թուական ըլլալն աւելի կը հաստատուի Ենովք քաղաքէն՝ զոր Վային շինեց: Վասն զինտա քան յիշատակել զծնունդ Սեթայ, կը հանդիպինք Ս. Գրոց մէջ Ենովք քաղաքին յօրինման յիշատակութեան. « Կային... ծնալ զԵնովք. և շինէր քաղաք և զնէր անուն քաղաքին յանուն որդւոյ իւրոյ Ենովքայ » (Նն. Գ. 17): Եթէ զԵնովք կայինի անդրանիկն համարինք, Ս. Ալգոստինոս կ'ըսէ, « Անմարթ էր միով մարդով քաղաք սահմանել. որ չէ ինչ՝ բայց բազմութիւն մարդոց՝ յօդու իմն ընկերութեան շաղկապեալ (Գիրք ԺԵ, գլ. Ը) » և կը շարունակէ. « Այլ յորժամ տուն նորա այնչափ բազմամարդացաւ, մինչեւ ունել զչափ ժողովուրդ կոյման, յայնժամ ապաքէն հնար էր և քաղաք կանգնել »: Արդ 130 տարուան մէջ կարելի՞ էր այդքան բազմամալ մինչև յօրինման քաղաքի պէտք ըլլալ, նա աւանիկ նոյնչափ ժամանակի մէջ կը տեսնենք յետոյ Յակոբայ վրայ որ 75 հոգի եղան բոլոր ընտանիքն հանդերձ բազմակնութեամբ, իսկ նախահարց ժամանակ բազմակնութիւն չկար, մինչև Կայինի ցեղին Ղամեքայ ժամանակ, որոյ համար Ս. Գիրք կ'ըսէ, թէ առ երկուս կանայս: Յակոբայ տունն 130 տարւոյ մէջ 75 հոգի բազմացած ըլլալով հանդերձ՝ ժողովուրդ մը չեն կազմեր որ քաղաք շինելու հարկ ըլլայ. և որովհետև գրողն տեսեր էր քաղաքներ, աւաններ, գիւղեր, և անոնց մէջ եղած դանազանութիւնը գիտէր, քաղաք կոչած ժամանակ կ'իմանար զայն՝ որ ունի քաղաք անուան արժանի ամե. նայն յատկութիւնք, որ է մեծութիւն և բազմութիւն: Արդ եթէ Կայինի տունը 130 տարւոյ մէջ Ալամայ տաւրինբու հաշուով և ոչ Վայինի, վասն

զի անորոյ է ժամանակ ծննդեան Կայինի և Աբելի, որով և ոչ 100 տարուան միջոց կրնայ հաշուիլ թող թէ 130 տարի, որ 75 կամ առ առաւելն 200 հոգի բազմացած զեննք, կարծեմ չէ կարելի ամենուն ըմբռման համեմատ իսկ այդչափ հոգւով քաղաք կազմուիլ, Հետեաբար Ս. Գրոց թարգմանութեանց այն թուականը պէտք է ընդունիլ՝ որ աւելի յարմար է Կայինի զարմին մեծագումար ամման և քաղաքի շինութեան. որ է 230 տարին. — Աստի անշուշտ կրնանք հաստատել թէ Սեթայ ծնունդն Ալամայ նոյն 230 տարւոյն պատահած է, ըստ որում յետ քաղաքին շինութեան կամ անոր հետ կը յիշուի Ս. Գրոց մէջ, որպէս ըսինք:

Այս ամենայն ապացոյցք կը յանգին թէ թուականն Եբրայական բնագրին որ անդրանկին ծննդեան ժամանակը կը յիշատակէ, չէ կարելի առնուլ իբր յիշատակեալ ոչ անդրանիկ անձանց թուական, զոր Եթթանասունը ունին, որով Եթթանասնիցն կրնայ առնուիլ իբր ժամանակագրական ճիշդ թուական Ալամէն մինչև ջրհեղեղ, նաև օտար պատմութեանց ժամանակագրութիւնք ինչպէս Եգիպտացւոց և Բաբելացւոց, կը համաձայնին Եթթանասնից թուականին քան Եբրայեցւոց:

Ե. Այս յօդուածին մէջ պիտի խօսիմ այն երկու անձանց վրայ, զորս յառաջ յիշատակեցինք, և ըսինք՝ թէ կան ոմանք որոց անդրանիկ չըլլալն պատճառաբանութեամբ կը դռնենք, և ասոնք սուրբ Գրոց մէջ անդրանկի կարգն ունին, և են Սեմ և Աբրահամ: Եւ յետոյս, որ ժամանակագրութեան մէջ մասն ունի, ծննդեան ճիշդ թուականը գտնել հարկաւոր է:

Սեմ Ս. Գրոց պատմութեան մէջ անդրանկի կարգն ունի, ըստ որում յառաջ կը յիշուի քան իւր եղբարքը. այլ իւր ամաց հաշուէն որոյ կ'իմացուի՝ թէ չէ անդրանիկ. որովհետեւ Նոյ 500 տարւոյ էր, կ'ըսէ, սուրբ Գիրք, երբ

ծնաւ (Ծն. Ե 32) զՍէմ, Գամ և Յա-
բեթ, այսինքն նոյն տարին ծնաւ ան-
դրանիկը, և ապա այլքը:

Արդ Սէմ եթէ իբր անդրանիկ
ճիշտ հինգհարիւրորդ տարւոյն Նոյի
ծնած ըլլար, ջրհեղեղէն երկու տարի
վերջ — (Ջրհեղեղ պատահեցաւ յետ
100 տարւոյ Սեմայ ծննդենէն, Նոյի
վեցհարիւրորդին (Ծն. Է 6) — որ ժա-
մանակ ծնաւ զԱրփաքսադ (Ծն. ԺԱ
10), պէտք է ինքն Սէմ 102 տարւոյ
ըլլալ, և ոչ 100 տարւոյ, որպէս կ'ըսէ
Ս. Գիրք (Ծն. ԺԱ 10), Ուրեմն հետե-
ւաբար 502րորդ տարւոյն Նոյի ծնած
է Սէմ: և որովհետեւ Նոյ 500 տարե-
կան հասակին անդրանիկ մ'ունեցաւ,
ուրեմն այս անդրանիկն Յաբեթ է. և
կը հաստատուի նորա անդրանիկու-
թիւնն ի Ս. Գրոց « Սեմայ... եղբոր
Յաբեթի երիցոյ » (Ծն. Ժ. 21): Բաց
ասկից տասներորդ գլուխն Յաբեթի
ցեղաբանութենէ կը սկսի. եթէ Սէմ
յառաջ յիշուելուն համար անդրանիկ
կարծուի նախորդ գլխոց մէջ, այս
գլխոյս մէջ ամենէն վերջը յիշուելուն
համար պէտք չէ և ոչ կրտսեր համարել.
զի ահա յայտնի կը կարգանք. « Եւ
գիտաց (Նոյ) զինչ արար ընդ նա որ-
դին իւր (Գամ) կրտսեր (Ծն. Թ. 14).
ուրեմն Սեմայ կը մնայ միայն միջին
կարգն:

Այսպէս է նաև Աբրահամ, բայց
այս տարբերութեամբ որ Աբրահամու
անդրանիկ չըլլայ հաւաստի է, բայց
թէ կրտսեր է թէ միջին անյայտ է. ըստ
կարգին անդրանիկ տեղն կը գրաւէ
այլ թէ իրօք այսպէս է՝ քննենք:

Ամենայն թարգմանութիւնք Եբրա-
յեցւոյն հետ միասին Աբրահամու Նա-
քովրայ և Առանայ ծնունդը կը գնեն
յ70 երորդ ամի կենաց Թարայի. ուր
ընդ հակառակն Աբրահամ Թարայի
130երորդ տարւոյն կը ծնանի. (թէ-
պէտ ոմանք ի Ս. Հարց առաջինը
պաշտպանեն նկատմամբ Աբրահամու,
ինչպէս Եւսեբի, Ս. Աւգոստինոս...):

Թարա մեռաւ ի խառան 205 տա-
րեկան, « Եւ եղեն ամենայն առաք
Թարայի ի խառան ամբ երկերիւր և
հինգ, և մեռաւ Թարայ ի խառան
(Ծն. ԺԱ 32) »: Աբրահամ իւր հօր
մահուան ժամանակ եօթանասուն ու
հինգ տարուան էր. « Եւ Աբրամ էր
ամաց եօթանասուն և հնգից յորժամ
ել ի խառանէ (Ծն. ԺԲ 4) »: Եւ թէ
իւր պանդխտութիւնն հօրը մահուա-
նէն վերջն է՝ կը վկայեն բանք նախա-
սարկաւազին Ստեփանոսի ի գործն ա-
ռաքելոց. « Յետ մեռանելոյ հօր նորա՝
փոխեաց և պանդխտեցոյց յերկրիս
յայսմիկ, յորում գուցայժմ բնակեալ
էք (Գործք Ա. Է 4) »: Արդ եթէ Աբրա-
համ եօթանասունուհինգ տարուան էր
իւր հօր Թարայի մահուան ժամանակ,
և նա երկուհարիւր հինգ տարուան
մեռաւ, հետեւաբար Աբրահամու ծը-
նունդն Թարայի 130երորդ տարւոյն
կը պատահի (205-75=130), Այս հե-
տեութեամբ Աբրահամու ծնունդն այլ
ևս Թարայի 70երորդ տարւոյն պա-
տահած չենք կրնար ըսել, այլ անդրան-
կին ծնունդն նոյն թուականին հան-
դիպած: Այս այսպէս ըլլալով, 70էն
ց130՝ 60 տարւոյ միջոց մի մեր դի-
մաց կ'ենէ, զոր պէտք է ժամանակա-
գրութեան վրայ աւելցնել, և զոր Եւ-
սեբի և իւր հետեւողք զանց ըրեր են:

Չ. Անցնինք վեցերորդ յօդուածին,
վերջ տալու համար Ծննդոց գրոց.
տպացուցանելու համար, թէ յԱղամայ
ցման Յովսեփայ 3759 տարի է: Այս
յօդուածիս մէջ հարկ է ցուցնել զգո-
յութիւն կայնան նահապետի մի, յետ
ջրհեղեղի, իբրև որդի Արփաքսադայ
և հայր Սաղայի:

Յետ ջրհեղեղի կը յիշեն Ս. Գիրք
Սեմայ ցեղը ուրիշ նահապետաց հետ.
և այս ցեղէն յառաջ կը բերեն զԱբրա-
համ և զիսրայէլ: Այս նահապետաց
կարգէն գուրս թողուած է կայնան
որդի Արփաքսադայ և հայր Սաղայի:
Բնադիր և թարգմանութիւնք գրեթէ

առ հասարակ, (Երբայեցին, Քաղաքացիին, Ասորին, Արարացին, և նոյն իսկ յոյն Եօթանասունը) չեն յիշատակեր ոչ ի գիրս Ծննդոց և ոչ Ա. Մնացորդաց մէջ, Միայն մեր թարգմանութիւնն վերոյիշեալ երկու տեղեաց մէջ կը յիշատակէ իւր կարգին. սակայն և մեր տպագրի ծանօթութեան մէջ կայ՝ թէ ի բազում օրինակս մեր պակասի, և յերկուս և եթէ կայ «զկայնան...» : Այլ ի զուր դրուած չէ կայնան մեր թարգմանութեան մէջ. վասն զի անոր գոյութեան Ղուկաս աւետարանիչ ևս կը վկայէ. « Որ Սաղայի, որ Կայնանայն, որ Արփաքսադայն (Ղկ. Գ 36) : Ոմանք ի սրբոց հարց ընդունին զկայնան հայր Սաղայի. և Ս. Ագոստինոս Յաղաքս քաղաքին Աստուծոյ (Գիւր ԺԶ ԳԼ Ժ) մէջ ճիշտ մեր հայկական օրինակին նման կը դնէ. բայց թէ ինչո՞ւ Ս. Գրոց միւս օրինակք կամ թարգմանութիւնք կը լռեն, Հալք պատճառը Կայնանայ չարութիւնը կը համարին ¹ : Բայց որպէս զի պատմութեան կարգն չփոխուի, Սաղայ Համարուի որդի Ար-

1. Զեապիր Տումարականաց միոյն մէջ կ'ըսուի, թէ Զրույ յառաջերութիւն Կայնան հնարած է՝ որոյ համար պատժեց Աստուած զինքն, իւր անունն իսկ չնկելով :

փաքսադայ այլ թուոն, Ղուկաս պատշաճ համարած է յիշել և զկայնան, Այս Կայնան իւր 130 երրորդ տարին ծնաւ զՍաղայ (Ծն. ԺԱ 13), եթէ Սաղայ համարուի որդի Արփաքսադայ, 130 տարի ժամանակագրութենէն կը պակասուի՝ և փոքր ժամանակ չէ երբ յաւելունք նաև 20 տարի Մաթուսղայի թուականէն, և 60 տարի Աբրահամէն, որով միասին 210 տարւոյ միջոց մի անյայտ բրած կ'ըլլանք ժամանակագրութենէն :

Արդ Ադամէն մինչև Զրհեղեղ և Զրհեղեղէն մինչև ի մահ Յովսեփայ ըստ մեր Ս. Գրոց գտանք 3759 տարի, զոր Եւսեբի 3548 տարի կը հաշուէր իւր ժամանակագրութեան մէջ, Ադամէն մինչև ծնունդ Աբրահամու թուելով 3187, և Աբրահամու ծննդենէն մինչև ցմահ Յովսեփայ 364 տարի : Արդ եթէ պակասը՝ որ է 210 տարի՝ վրայ յաւելունք, կ'ընէ 3758 տարի, որ է ըսել՝ մեր թուականէն մի տարի պակաս. և ասոր պատճառն է Զրհեղեղն՝ որ մի տարի տեկց, և Եւսեբեայ հաշուի մէջ չէ մտած. որով այս մի տարին ևս յաւելլով, Ադամէն ցմահ Յովսեփայ՝ ժամանակն կը հաշուի 3759 տարի : Եւ հօս կը կնքուի Ծննդոց գրոց թուականն, հաստատուելով որ արդարև մերն է ճիշդ :

Հ. Ի. Ս.

